Կարգապահական գործ թիվ ԿԳ-19063

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2019 թվականի օգոստոսի 27-ի թիվ 185-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/117-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՄՆԱՑԱԿԱՆ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Սիմոն Բաբայանի, Խորհրդի անդամներ Կարապետ Աղաջանյանի, Հրանտ Անանյանի, Սեդրակ Ասատրյանի, Գայանե Դեմիրչյանի, Տիգրան Խուրշուդյանի և Նելլի Հարությունյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Մնացական Ղազարյանին (արտոնագիր՝ թիվ 248) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 06.03.2019թ. տրամադրված տեղեկանքի՝ փաստաբան Մնացական Ղազարյանն ունի 40.000 (քառասուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով՝ 2018թ. հունիսից 2019թ. հունվար (ներառյալ) ամիսներն ընկած ժամանակահատվածի համար անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

11.03.2019թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալի թիվ 113-Ա/ԿԳ-19063 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Մնացական Ղազարյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 2.9.1 ենթակետի խախտման հատկանիշներով:

Սույն կարգապահական գործը 15.03.2019թ. հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստերը տեղի են ունեցել 29.05.2019թ., ժամը՝ 19:50-ին և 27.08.2019թ., ժամը՝ 19:16-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք. Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ 12 սենյակ):

3. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

29.05.2019 թվականին Պատասխանողը ներկայացել է Խորհրդի նիստին և հայտնել, որ վճարել է անդամավճարի պարտքը, իսկ չվճարելը կապված է եղել ֆինանսական պատճառներով: Պատասխանողը նշել է նաև, որ կարգապահական վարույթ հարուցելուց չի տեղեկացել և չի ծանուցվել, ուստի կարգապահական վարույթն իր նկատամբ հարուցվել է ընթացակարգային խախտումներով:

Պատասխանողը հայտնել է նաև, որ երբևէ կարգապահական պատասխանատվության չի ենթարկվել, ինչպես նաև չի ծանուցվել և որոշում չի ստացել նախկինում իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթից:

27.08.2019 թվականի Խորհրդի նիստին Պատասխանողը ներկայացել և ըստ էության պնդել է նախկինում հայտնած իր դիրքորոշումը:

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Մնացական Ղազարյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 23.12.1994թ. (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքով),

2) փաստաբան Մնացական Ղազարյանն ունի 40.000 (քառասուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով՝ 2018թ. հունիսից 2019թ. հունվար (ներառյալ) ամիսներն ընկած ժամանակահատվածի համար անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 06.03.2019թ. տրամադրված տեղեկանքով),

3) փաստաբան Մնացական Ղազարյանն իր անդամավճարի պարտքը մարել է (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 29.05.2019թ. Խորհրդին տրամադրված տեղեկանքով):

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ Մնացական Ղազարյանի (արտոնագիր՝ 248, ստացված՝ 23.12.1994թ.) նկատմամբ 2013-2019թթ. ընկած ժամանակահատվածում անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով մեկ անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (չհաշված սույն կարգապահական վարույթը): Անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով ավարտված կարգապահական վարույթով փաստաբան Մնացական Ղազարյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:

Խորհրդի 17.12.2018թ. թիվ ԿԳ/237-Ա որոշմամբ Մնացական Ղազարյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ նկատողության անդամավճար վճարելու պարտականությունը

չկատարելու համար: Տույժը մարված չէ:

6. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Մնացական Ղազարյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության համաձայն՝ *փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար: Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ:*

Համաձայն Կանոնագրքի 2.9.1. կետի՝ *փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:*

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 7-րդ կետի՝ *փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը, իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է, որ ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:*

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանը ենթակա է պատասխանատվության:

Փաստաբան Մնացական Ղազարյանը խախտել է վերը նշված նորմերի պահանջները, որն ապացուցվում է գործում առկա՝ ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 06.03.2019թ. տրամադրված տեղեկանքով:

Խորհուրդը կարգապահական տույժ նշանակելիս հաշվի է առնում, որ Պատասխանողը նախկինում էլ չի կատարել անդամավճար վճարելու պարտականությունները, ինչպես նաև այն հանգամանքը, որ սույն որոշումը կայացնելու դրությամբ մարել է իր անդամավճարի պարտքը ամբողջությամբ:

Ինչ վերաբերում է Պատասխանողի այն պնդմանը, որ նախկինում իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի վերաբերյալ ծանուցումներ չի ստացել, ապա կարգապահական գործի նյութերում առկա են հետադարձ ծանուցագրերի պատճենները, որոնց համաձայն 29.06.2018 թվականին հարուցված թիվ 297-Ա/ԿԳ-18136 կարգապահական վարույթի որոշումը վերջինիս ուղարկվել է ք. Երևան, Արշակունյաց 5/321 և

Արմավիրի մարզ, գ. Հայկաշեն հասցեներով, որոնք Պատասխանողը ստացել է համապատասխանաբար 06.08.2018 թվականին և 08.08.2018 թվականին:

Սույն՝ 113-Ա/ԿԳ-19063 որոշմամբ հարուցված կարգապահական վարույթի մասին ծանուցումներն ուղարկվել են ք. Երևան, Արշակունյաց 5/321 և Արմավիրի մարզ, գ. Հայկաշեն հասցեներով, որոնք Պատասխանողը ստացել է՝ համապատասխանաբար 22.03.2019 թվականին և 25.03.2019 թվականին:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, Կարգի 21-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Մնացական Ղազարյանին (արտոնագիր՝ թիվ 248) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Կանոնագրքի 2.9.1. ենթակետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Մնացական Ղազարյանի (արտոնագիր թիվ 248) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Մնացական Ղազարյանին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Սիմոն Բաբայան

27 օգոստոսի 2019թ.
թիվ ԿԳ/117-Ա
ք. Երևան